ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2023

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН ТИГРАН САМВЕЛОВИЧ

ПРОБЛЕМА МОДЕРНИЗАЦИИ ОБОРОННЫХ РЕФОРМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук, по специальности ИГ.00.02 “Политические институты и процессы”.

АВТОРЕФЕРАТ

Ереван 2023

Ատենախոսության թեման հաստատվել է **ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:**

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Տիգրան Տոնիկի Քոչարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր պրոֆեսոր՝ **Աշոտ Փայլակի Ենգոյան**
քաղաքական գիտությունների թեկնածու **Ռաֆիկ Գուրգենի Ավետիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2023թ. դեկտեմբերի 19-ին՝ ժամը 14:00-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ» 056 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան Ալեք Մանուկյան 1:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում: Սեղմագիրն առաքված է 07.11.2023թ.:

056 Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Վ. Ս. Պետրոսյան

Тема диссертации утверждена в **Институте философии, социологии и права НАН РА**

Научный руководитель: доктор политических наук, профессор
Тигран Тоникович Кочарян

Официальные оппоненты: доктор политических наук, профессор
Ашот Пайлакович Енгоян
кандидат политических наук, доцент
Рафик Гургенович Аветисян

Ведущая организация: **Российско-армянский университет**

Защита диссертации состоится 19 декабря 2023 г. в 14:00 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 «Политология и международные отношения» ВАК РА. Адрес: РА, г. Ереван 0025, ул. Алека Манукяна 1.

С диссертацией можно ознакомиться в библиотеке имени Саркиса и Мари Измирлянов ЕГУ.

Автореферат разослан 7 ноября 2023 года.

Ученый секретарь специализированного совета,
кандидат исторических наук, доцент В. С. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Ուկրաինական պատերազմի և Ռուսաստան-Արևմուտք հակամարտության պայմաններում ընթանում է աշխարհակարգի կերպափոխման և եվրասիական մայրցամաքում անվտանգային նոր ճարտարապետության ձևավորման գործընթացը: Գերիշխող համաշխարհային ուժի բացակայությունը (ինչպիսին 1990-ականներին ԱՄՆ-ն էր) մեծացնում է միջազգային հարաբերություններում քաոսը՝ նպաստելով եվրասիական տարբեր տարածաշրջաններում ուժային կենտրոնների միջև գերակայության համար պայքարի ծավալմանը: Հավաքական Արևմուտքի (ԱՄՆ,ՆԱՏՕ, ԵՄ), ՌԴ-ի և Չինաստանի ռազմավարական-անվտանգային գործող ռազմավարությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ միջազգային հարաբերությունները թևակոխում են Արևմուտք-ՌԴ և ԱՄՆ-Չինաստան երկարաժամկետ հակամարտության փուլը, որը բնութագրվում է անվտանգային սպառնալիքների մեծ անորոշությամբ:

Գլոբալ անվտանգային ճարտարապետության կերպափոխման, տրանսպորտային-հաղորդակցային ցանցի վերաձևավորման պայմաններում ՌԴ-Արևմուտք աշխարհաքաղաքական հակամարտության ծավալումը և Մերձավոր Արևելքում ծավալվող զարգացումներն էապես ազդում են Հարավային Կովկասի անվտանգային միջավայրի վրա՝ տարածաշրջանը վերածելով գլոբալ և տարածաշրջանային մրցակցության առանցքային ճակատներից մեկի:

Տարածաշրջանային սպառնալիքները և դրանց չեզոքացումը կազմում են Հարավային Կովկասի անվտանգության հիմնական գործոնները: Որպես այդպիսի սպառնալիքներ կարելի է դիտել ինչպես տարածաշրջանային պետությունների միջև առկա հակասությունները, անվտանգության բնագավառում նրանց որդեգրած քաղաքականությունների անհամատեղելիությունը, այնպես էլ այստեղ առկա մի շարք հակամարտությունները: ՀՀ պաշտպանական-անվտանգային քաղաքականության մշակման համատեքստում հարկ է հաշվի առնել, որ կարճաժամկետ և միջնաժամկետ հեռանկարում էականորեն մեծանում են Հարավային Կովկասի՝ տարածաշրջանային և արտատարածաշրջանային ուժային կենտրոնների միջև ռազմաքաղաքական մրցակցության նոր «օբյեկտ» դառնալու անվտանգային ռիսկերը:

Հայաստանի համար մտահոգության հիմնական աղբյուրը Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքն է, որով անհանդուրժող և ոչ կառուցողական քաղաքականություն է իրականացվում Հայաստանի ազգային (անվտանգային) շահերի նկատմամբ: Ադրբեջանի կողմից առկա է Հայաստանի Հանրապետության նկատմամբ անմիջական ռազմական սպառնալիք, որի վկայություններից են Արցախյան երկրորդ պատերազմից հետո այդ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության որդեգրած քաղաքականությունը, ՀՀ ինքնիշխան տարածքների հանդեպ 2021-2023թթ. իրականացրած ռազմական ագրեսիան, հայատյացության քաղաքականության սաստկացումը, ինչպես նաև բանակցային գործընթացն ամբողջությամբ մերժելուն որդեգրած դիրքորոշումը: Փաստացի 2020թ. Ադրբեջանը գնաց հակամարտության ուժային լուծման, ինչի մասին բազմիցս հնչեցրել է նախկինում և որի նախերգանքը 2016թ. ապրիլյան «քառօրյան» էր: Պետք է փաստել, որ պատերազմ սկսելու Ադրբեջանի մտադրությունը տեսանելի էր ոչ միայն տարատեսակ քաղաքական

հայտարարությունների, այլև ռազմական ոլորտում վերջինիս կողմից իրականացվող ակտիվ գործնական քայլերի ներքո, որի շրջանակներում ձեռք էր բերվել մեծ քանակությամբ հարձակողական, հատկապես՝ հեռահար հարձակողական բնույթի սպառազինություն: Ադրբեջանը նույնիսկ ներկայիս հետպատերազմյան իրավիճակում չի ժխտում, որ զինված ուժերի պատրաստության և կիրառման պլանները շարունակում են կրել հարձակողական բնույթ: Ադրբեջանի վարած տեղեկատվական պատերազմի շրջանակներում պետական մակարդակով և բոլոր հարթակներում առաջ է մղվում հակահայկական քարոզչությունը՝ փաստերի խեղաթյուրմամբ հայկական կողմին ներկայացնելով որպես ագրեսիվ կողմ և տարածաշրջանային կայունության, համագործակցության ու կայուն զարգացման և երկարատև խաղաղության հիմնական խոչընդոտ:

Ներկայումս ՀՀ զինված ուժերի հիմնական խնդիրը խորքային բարեփոխումների ու արդիականացման գործընթացի իրականացումն է: Այնուամենայնիվ, նշվածը կյանքի կոչելու համար պետք է հետևողականորեն շարունակել աշխատանքն ուժերի անհավասարակշռությունը մեղմելու ուղղությամբ՝ զուգահեռաբար ակտիվ աշխատանք տանելով նաև միջազգային անվտանգային կազմակերպությունների հետ: Ուկրաինական պատերազմը, հարավկովկասյան տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակը և պատերազմից հետո հարևան երկրի հետ ստեղծված ուժերի և միջոցների էական տարբերությունը ստեղծել են մի իրավիճակ, երբ ՀՀ առջև ծառացած մարտահրավերները մեղմելը և առնվազն կառավարելի դարձնելը հայկական կողմից պահանջելու է լրջագույն և հետևողական մեծ աշխատանք: ՀՀ անվտանգության երաշխավորման ռազմաքաղաքական հենքի ու պաշտպանության ապահովումը կարող է իրականացվել բացառապես զինված ուժերի շարունակական զարգացման և վերջինիս կարողությունների ընդլայնման միջոցով:

Պաշտպանության ոլորտի ընթացիկ և հեռանկարային զարգացման ծրագրերը պետք է ուղղված լինեն բանակի կառուցվածքային և կադրային վերափոխմանը, մարտական կարողությունների զգալի ավելացմանը՝ միտված լինելով հավանական հակառակորդին ցանկացած պահի հակահարված տալու պատրաստականությանը:

Տարբեր պետություններում ընթացող պաշտպանական բարեփոխումներն ունեն մի քանի ակներև միտումներ: Առաջինը թե՛ միջազգային և թե՛ ներքին պաշտպանական համակարգերի ինտեգրված բնույթն է: Եթե միջազգային ինտեգրումը պայմանավորված է անվտանգության նոր սպառնալիքներին համատեղ հակազդեցության անհրաժեշտությամբ, ապա ներքին ինտեգրումը պայմանավորված է պաշտպանական համակարգերի արդյունավետ գործելու, մասնավորապես, որոշումների կայացման, խնդիրների ձևավորման և իրականացման ժամանակը կրճատելու և այդ նպատակով ֆինանսական միջոցների խնայողության, պաշտպանության ոլորտում ռազմաքաղաքացիական հարաբերությունների հստակեցման, պլանավորման գործում քաղաքացիական մասնագետների մասնակցության և պաշտպանական գերատեսչության ու Գլխավոր շտաբի միջև ինտեգրված միասնական պլանավորման իրականացման հրամայականով:

Հաջորդ միտումը արհեստավարժության և պայմանագրային պահեստազորային համակարգի համատեղումն է: Եթե արհեստավարժությունը բարձրացնում է ԶՈՒ-ի

մարտունակության մակարդակը, ապա պայմանագրային պահեստազորային համակարգն անհրաժեշտ է զորահավաքի միջոցով տարածքային պաշտպանություն իրականացնելու համար: Միևնույն ժամանակ այս համակարգի ներդրումը զորացրումից հետո ակտիվ զինծառայողներին քաղաքացիական մասնագիտությամբ վերապատրաստման, իսկ ԶՈՒ-ի կրճատման դեպքում նաև զորամասերի կոնվերսիայի անհրաժեշտություն է ստեղծում:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի վերափոխումների գործընթացի շրջանակներում ի հայտ եկող խնդիրները համալիր լուծումների կարիք ունեն, որի համար առաջնային է դառնում ողջ կառավարման համակարգի և զինված ուժերի ղեկավարման բոլոր օղակների աշխատանքների ներդաշնակեցումը:

Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունները, պետության առջև ծառացած անվտանգության համակարգի երաշխավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև պաշտպանական վերափոխումների գիտական վերլուծության հրամայականը պայմանավորում են ատենախոսության թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը:

Արցախյան երկրորդ պատերազմից հետո ձևավորված աշխարհաքաղաքական իրողությունները, մարտահրավերները և ՀՀ անվտանգության երաշխավորման հրամայականը պահանջում են պաշտպանության բնագավառի հիմնախնդիրների ամբողջական ու հետևողական վերլուծություն: Պետության գործունեության մեջ իր հատուկ կարևորությամբ առանձնանում է պաշտպանության բնագավառը, որն իր հերթին արդիական է դարձնում այդ ոլորտի հետազոտական և գիտավերլուծական աշխատանքները:

Պետք է նշել, որ 2000-ականների սզկբից ի վեր տարաբնույթ ուսումնասիրություններ են իրականացվել ՀՀ պաշտպանության բնագավառի կայացման, զինված ուժերի ստեղծման, զարգացման, վերափոխման հիմնահարցերի վերաբերյալ: Նշված ուսումնասիրությունների համար, անկասկած, որպես հիմք են ծառայել ոլորտի առաջատար գիտական և հետազոտական հաստատությունների և կենտրոնների, ինչպես նաև փորձագետների աշխատությունները, որոնք ընդհանուր առմամբ ստեղծել են ՀՀ ողջ անվտանգային համակարգի գիտատեսական հիմքը՝ առանցքային հարթակ ստեղծելով ոլորտի հետագա գործնական զարգացման համար:

Ատենախոսության համար վերլուծական հիմք են հանդիսացել նաև միջազգային առաջատար գիտահետազոտական հաստատությունների և կենտրոնների, ինչպես նաև ոլորտի առաջատար գիտնականների և փորձագետների աշխատությունները, ուսումնասիրությունները, վերլուծությունները և տեսակետները, որոնց միջոցով ատենախոսության համար ապահովել ենք հիմնարար վերլուծության հիմք՝ դրված խնդիրներին և նպատակին հասնելու համար: Աշխատաքնի համար ուսումնասիրվել և վերլուծվել են նաև ՀՀ անվտանության ոլորտին, պաշտպանության բնագավառին, ռազմական անվտանգության, պաշտպանական և արտաքին քաղաքականության հիմնահարցերի վերաբերյալ երկրի ռազմաքաղաքական ղեկավարության պաշտոնական դիրքորոշումները և գնահատականները:

Հետազոտության հիմք են կազմել նաև արծարծվող հիմնախնդիրների կարգավորման համապատասխան օրենսդրական բազայի, քաղաքական-իրավական փաստաթղթերի, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի, ինչպես նաև այլ փաստաթղթերի՝ կոնվենցիաների, պայմանագրերի, հռչակագրերի և համաձայնագրերի վերլուծությունը: Ուսումնասիրվել են նաև ՀՀ անվտանգային ոլորտի հայեցակարգային փաստաթղթերը և նորմատիվ իրավական բազան, արտերկրի պաշտպանության և անվտանգության բնագավառները կանոնակարգող նմանատիպ փաստաթղթերը:

Ատենախոսության համար օգտագործված գրականության վերլուծությունը հնարավորություն է ընձեռել կատարելու գիտականորեն հիմնավորված եզրահանգումներ և ներկայացնելու որոշ առաջարկություններ:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության նպատակն է հետազոտել ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների էությունը, դերն ու նշանակությունն ազգային անվտանգության ապահովման համատեքստում, գիտական և վերլուծական տեսանկյունից գնահատել բարեփոխումների արդյունավետությունը և շարունակականության ապահովումը համակարգի զարգացման գործում, նախանշել և առաջարկներ ներկայացնել բարեփոխումների շրջանակի հետագա ընդլայնման, ինչպես նաև անվտանգային նոր միջավայրին համահունչ ՀՀ պաշտպանական նոր համակարգի ձևավորման համար:

Ատենախոսության մեջ արծարծվող նպատակներին հասնելու համար առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- հետազոտել պաշտպանական բարեփոխումների հաստատութենականացման գործընթացի հիմքերը,
- վերլուծել հետխորհրդային մի շարք երկրների պետական կառավարման կերպափոխման գործընթացը, պաշտպանության բնագավառի դերն ու նշանակությունը, բարեփոխումների էության վրա ազդող հիմնական գործոնները,
- վերլուծել և գնահատել Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի ոլորտային բարեփոխումները համապետական պաշտպանունակության ապահովման գործում, վերջինների նպատակաուղղվածության, արդյունավետության և շարունակականության ապահովման հիմնական հայեցակետերը և հիմնական ձեռքբերումները,
- գնահատել ՀՀ շուրջ ձևավորված անվտանգային միջավայրը և վերհանել արտաքին անվտանգային հիմնական սպառնալիքները, Արցախյան երկրորդ պատերազմից հետո տարածաշրջանում ի հայտ եկած իրողությունները և միջազգային արդի ռազմաքաղաքական զարգացումները,
- գնահատել պաշտպանության բնագավառում շարունակական բարեփոխումների նշանակությունը համակարգի արդիականացման գործում,
- նախանշել պաշտպանության բնագավառի հայեցակարգային ուղենիշները,
- գնահատել գիտական և հետազոտական հիմքով պաշտպանական բարեփոխումների հեռանկարային զարգացման ուղղություններն ու հնարավորությունները:

Հետազոտության օբյեկտը պաշտպանության բնագավառի բարեփոխման հիմնական ուղղությունների և Հայաստանի Հանրապետությունում ընթացող անվտանգային ու ռազմաքաղաքական գործընթացներում դրանց արտացոլման վերլուծությունն է:

Հետազոտության առարկան պաշտպանության բնագավառի բարեփոխման ուսումնասիրումն է՝ որպես Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ոլորտի կարևորագույն բաղադրիչ:

Ատենախոսության աղբյուրները և մեթոդաբանական հիմքը.

Ատենախոսության տեսական հիմքը կառուցված է ՀՀ և միջազգային առաջատար գիտահետազոտական հաստատությունների և կենտրոնների, ոլորտի առաջատար գիտնականների և փորձագետների աշխատությունների և ուսումնասիրությունների, ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության պաշտոնական դիրքորոշումների ու գնահատականների, ՀՀ անվտանգային ոլորտի հայեցակարգային փաստաթղթերի և նորմատիվ իրավական բազայի, վիճակագրական տվյալների վերլուծության վրա:

Աշխատանքում օգտագործվել են միջազգային գիտական և հետազոտական շրջանակներում լայն կիրառում ունեցող ինչպես որակական և քանակական գիտահետազոտական մեթոդները, այնպես էլ տվյալների, վիճակագրության, տարատեսակ հարցումների վերլուծության, պետական հաստատությունների, մասնավոր կազմակերպությունների գործունեության համեմատական գնահատման, իրավական և պատմական վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը.

- իրավաքաղաքական գործընթացի համապարփակ ու ամբողջական վերլուծությամբ գնահատվել և վերլուծվել են Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ու ռազմաքաղաքական հիմնախնդիրների համատեքստում պաշտպանական բարեփոխումները,
- հիմնավորվել է, որ ՀՀ զինված ուժերում վերջին 20 տարիների ընթացքում իրականացվել են շարունակական և խորքային բարեփոխումներ, որոնք սակայն չեն կրել համակարգային բնույթ և ինչ որ պահի դադարել են ընթանալ համադասված ինչպես ամբողջ զինված ուժերի, այնպես էլ ընդհանուր առմամբ պաշտպանության բնագավառի զարգացման համար: Հետազոտությունը հնարավորություն է ընձեռել գիտական հենքով վերլուծել և գնահատել բարեփոխումների ընթացքը՝ հիմնավորելով և նախանշելով նոր իրողություններին դրանց համապատասխանեցման միտումները և առաջարկություններ ներկայացնել հեռանկարային ուղենիշերի վերաբերյալ,
- Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության բնագավառի շարունակական զարգացման համատեքստում գիտատեսական մոտեցմամբ գնահատվել և հետազոտվել են ավելի լայն առումով անվտանգային ոլորտի կառուցակարգերի վերափոխումները, որոնք ՀՀ անվտանգային նոր իրողություններում կարող են հիմք հանդիսանալ բնագավառի հեռանկարային զարգացման համար,
- հիմնավորվել է այն առաջարկությունը, որ ՀՀ պաշտպանության ապահովման համակարգը ռեֆլեկտոր կերպով արձագանքում է սպառնալիքներին և

մարտահրավերներին: Հետևաբար, անհրաժեշտ է, որ այն ունենա նաև դրանց կանխատեսման հնարավորություն, այդ սպառնալիքները կանխելու ու կասեցնելու համար ժամանակին միջոցառումներ ձեռնարկելու կարողություն: Տվյալ ուղղությունը կազմում է պաշտպանության համակարգի, դրա կառավարման և կառուցվածքային տարրերի կանխատեսական-վերլուծական գործառույթի հիմքը: ՀՀ-ում անցկացվող պաշտպանական բարեփոխումների շրջանակներում այն զարգացման առաջնահերթություն է, ինչը ռազմաքաղաքական միջավայրի ու հնարավոր զարգացումների գնահատմամբ հնարավորություններ կստեղծի թույլատրելի ռիսկերի որոշման համար,

- պաշտպանական բարեփոխումների իրավաքաղաքական հիմքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պատշաճ կերպով ամրագրված չեն ոլորտի որոշ գործառույթներ ու սկզբունքներ: Մասնավորապես, պաշտպանության ոլորտի վերահսկողական գործառույթը ներառվում է միայն պաշտպանական ծախսերի օգտագործման մասում՝ կապված կառավարության գործունեության ծրագրերին համապատասխան պաշտպանության մասով պետական բյուջեի կատարողականի հետ: Առաջարկվել է վերահսկողական գործառույթը կիրառել ավելի լայն իրավասությամբ՝ ընդգրկելով պաշտպանական համակարգի գործունեության բոլոր ուղղությունները (համապատասխան լիազորությունների ամրագրմամբ և իրականացման կառուցակարգերի սահմանմամբ):

- Արցախյան երկրորդ պատերազմն ու դրան հաջորդող զարգացումներն ամբողջությամբ ապացուցեցին, որ ՀՀ զինված ուժերն ունեն լուրջ անհամապատասխանություն ստանձնած առաքելության և տրամադրության տակ գտնվող կարողությունների միջև: Այս իմաստով հիմնական խնդիրը ռազմաքաղաքական ռիսկի նվազեցումն է, որի համար կարելի է նախանշել երկու փոխլրացնող ճանապարհ. առաջինը՝ ակտիվացնել ներգրավումը դաշնակցային և գործընկերային երկկողմ ու բազմակողմ համագործակցային ծրագրերին՝ ստեղծելով որոշակի հավելյալ անվտանգային «բարձիկ», երկրորդը՝ ռազմական և մարտ վարելու կարողությունների ավելացումն է, որը պետք է դիտարկել ավելի ընդարձակ սպեկտրում (ռազմական գործողությունների տեսություն, կազմակերպչական կառուցվածք, կրթություն և վարժանք, սպառազինություն, ռազմական տեխնիկա ու նյութական միջոցներ, պաշտպանական այլ ենթակառուցվածքներ):

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը.

ՀՀ-ում պաշտպանության ոլորտը, իրականացվող բարեփոխումները և վերջիններիս արդյունավետությունը գիտատեսական մոտեցմամբ քիչ են ուսումնասիրված: Ատենախոսության տեսական նշանակությունն այն է, որ իրականացնելով պաշտպանության բնագավառի բարեփոխումների գործընթացի գիտատեսական գնահատումը՝ վերլուծությունը և եզրահանգումները կարող են մեթոդաբանական հիմք ծառայել պաշտպանության բնագավառում ռազմաքաղաքական հիմնահարցերին առնչվող գիտական նոր աշխատությունների համար: Ինչ վերաբերում է գործնական նշանակությանը, ապա աշխատանքը կարող է օգտակար լինել պաշտպանական բարեփոխումների գործընթացում նոր մոտեցումների, հայեցակարգերի, ոլորտի

առաջնորդող փաստաթղթերի մշակման, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների իրականացման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտը: Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են թվով 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ յոթ ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության մեջ օգտագործված գրականությունը կազմում է 130 աղբյուր, իսկ ատենախոսության ընդհանուր ծավալը 153 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հետազոտվող թեմայի արդիականությունը, ներկայացվել է հիմնահարցի գիտական մշակվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները և աշխատանքի տեսական ու կիրառական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ **«Պաշտպանության բնագավառի բարեփոխումները հետխորհրդային պետությունների պետական կառավարման բարեփոխումների համատեքստում»** վերնագրով, բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Պետական կառավարման կերպափոխումը հետխորհրդային ժամանակաշրջանում»** ենթագլխում համառոտ ներկայացվում են հետխորհրդային ժամանակաշրջանում պետական կառավարման կերպափոխման գործընթացի առանձնահատկությունները, վերլուծվում են նոր ձևավորվող պետական կառավարման ինստիտուտի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվող տեսակետները և մոտեցումները:

Սառը պատերազմի ավարտը և Խորհրդային Միության փլուզումը ոչ միայն արմատապես փոխեցին Եվրոպայում քաղաքական միջավայրը, այլև ի հայտ բերեցին սահմանադրական զգալի մարտահրավերներ:

Հետխորհրդային տարածքում ամենաարդիական խնդիրներից մեկը կապված էր կառավարման համակարգի ընտրության հետ: ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային տարածքում ձևավորվել են անցումային երեք տեսակի վարչակարգեր՝ համախմբված (consolidated), ցրված (dispersed) և բարեփոխված (reformed): Հետխորհրդային անցման շրջանում նախագահական կառավարման ձևին նախապատվություն տալիս էին այնպիսի հին վարչակարգերը, որոնք Միության փլուզման ընթացքում պահպանել են իրենց հասանելիությունը պետական իշխանության ռեսուրսներին: Նրանց նպատակը ոչ միայն իշխանության նկատմամբ մենատիրության պահպանումն էր, այլև դրա՝ ուրիշներին փոխանցելու հնարավորության բացառումը: Էստոնիային, Լատվիային բնորոշ էին խորհրդարանական, իսկ Լիտվային, Մոլդովային՝ խառը կառավարման ձևերը: Պետական կառավարման համակարգի աստիճանական փոփոխություն է տեղի ունեցել նաև Հայաստանի Հանրապետությունում: Մինչև 1995 թվականի սահմանադրության ընդունումը, ՀՀ-ին բնորոշ էր պետական կառավարման խորհրդարանական ձևը,

այդուհանդերձ այդ նախագահական կառավարման ձևին բնորոշ էին նաև պետական կառավարման այլ ձևերի հատկանիշներ: 1991 թվականին ընդունված «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին», «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» օրենքներով ձևավորվեց և մինչև 1995 թվականի Սահմանադրության ընդունումը գործում էր պետական կառավարման մի այնպիսի համակարգ, որը պարունակում էր ինչպես խորհրդակցական կառավարմանը, այնպես էլ նախագահական և խորհրդարանական կառավարմանը բնորոշ հատկանիշներ: Նախատեսված էին նախագահի և փոխնախագահի պաշտոններ (ինչը հատկանշական է նախագահական կառավարման ձևի համար) և վարչապետի պաշտոն (ինչը բնորոշ է կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևերին)»[1]:

2005 թվականի սահմանադրությամբ անցում կատարվեց կիսանախագահական կառավարման ձևին՝ նախագահի լայն լիազորություններով: 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներով Հայաստանը կիսանախագահական ձևի նախագահական-խորհրդարանական մոդելից անցում կատարեց խորհրդարանական-նախագահական մոդելին, ինչի արդյունքում կրճատվեցին 2005 թվականի սահմանադրությամբ երկրի նախագահին վերապահված բացարձակ լիազորությունները, և Հայաստանում սահմանվեց արևելաեվրոպական երկրներին բնորոշ կիսանախագահական կառավարումը:[2] Կառավարման համակարգի արմատական փոփոխություն տեղի ունեցավ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում, երբ ՀՀ-ն ամբողջապես անցավ խորհրդարանական կառավարմանը:

Այսպիսով, ԽՍՀՄ փլուզումից հետո առանձին երկրներ փորձել են վերափոխել պետական կառավարման համակարգը, ինչը պայմանավորված էր ինչպես նախկին ինստիտուտների անարդյունավետությամբ, այնպես էլ քաղաքական գործընթացներով: Այդուհանդերձ, ԽՍՀՄ նախկին անդամ պետություններից տարբեր ժամանակահատվածներում խորհրդարանական կառավարման ձևին են անցել միայն Հայաստանը, Վրաստանը, Լատվիան, Էստոնիան և Ղրղզստանը:

Երկրորդ՝ **«Պաշտպանության բնագավառի դերն ու նշանակությունը հետխորհրդային պետությունների պետական կառավարման մեջ»** ենթագլխում, քննարկվում են հետխորհրդային պետությունների, մասնավորապես՝ Վրաստանի և Ուկրաինայի պաշտպանության ոլորտներում իրականացված բարեփոխումները, հետագա գործընթացները, զարգացումներն ու հիմնական արդյունքները և համեմատականները ՀՀ-ում իրականացված նմանատիպ գործընթացի հետ:

ԽՍՀՄ տարիներին անդամ պետությունները կազմավորված, պատրաստված և սպառազինված էին խորհրդային մոդելով: Անդամ պետությունների բանակները նախատեսված չէին իրենց ռազմական անվտանգությունն ապահովելու համար, այլ սերտաճած էին խորհրդային կառավարման համակարգի հետ՝ որպես ենթակա

---

[1] Հարությունյան, Ա.Ա., «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում վերտառությամբ» թեկնածուական ատենախոսություն, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա, Երևան, 2016, էջ 9:

[2] Պողոսյան Վ. «Կառավարման ձևի էվոլյուցիան Հայաստանում. արդյունքներ և հեռանկարներ», Հայկական Քաղաքագիտական Հանդես, 2(2) 2014, էջ 95:

բաղադրիչ, որի հիմնական խնդիրն էր սահմանափակ դեր խաղալ նախանշված աշխարհագրական տարածքում Խորհրդային Միության Գլխավոր շտաբի պլանի շրջանակներում: Սա ենթադրում էր ինտեգրման ու փոխգործունակության բարձր մակարդակ, այդուհանդերձ, ԽՍՀՄ փլուզումից հետո բանակներն արդյունավետ և անկախ գործելու ունակ չէին: Գրեթե բոլոր բանակներում զարգացած չէր արդյունավետ ՀՕՊ համակարգը, չկար համապատասխան սպառազինություն և կրթություն՝ անկախ ռազմական գործողություններ իրականացնելու համար: Բացակայում էին քաղծառայության ինստիտուտը, մասնագիտական գործունեություն ծավալող գիտահետազոտական կենտրոնները, հասարակական կազմակերպությունները, որոնք պետք է համապարփակ պատկերացում ունենային պաշտպանության ոլորտի մասին: Քաղծառայության համապատասխան ինստիտուտի բացակայությունը հնարավորություն չէր տալիս ձևավորել այնպիսի պաշտպանության նախարարություն, որ արդյունավետ իրականացներ ոլորտի կառավարարումը: Բյուջեի պլանավորման գործընթացի բացակայությունը նշանակում էր, որ կառավարությունները չէին պատկերացնում իրենց գերատեսչությունների իրական ծախսերը»3: Օրենսդիր մարմնի համապատասխան հանձնաժողովները չունեին մասնագիտական կարողություններ, առհասարակ գոյություն չուներ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն, իսկ քաղաքացիական վերահսկողությունը սահմանափակ էր:

Զուգահեռներ տանելով Հայաստանի, Վրաստանի և Ուկրաինայի պաշտպանության ոլորտի դերակատարությանը ընդհանուր պետական կառավարման մեջ պետք է նշել, որ չնայած երեք երկրների միջոցների և կարողությունների, ինչպես նաև սպառնալիքների և մարտահրավերների տարբերությանը, երեք երկրներն էլ համարյա թե նույն ժամանակահատվածում ՆԱՏՕ-ի աջակցությամբ իրականացրեցին Պաշտպանության ռազմավարական վերանայում, որը պետք է նպաստեր նշված երկրների պաշտպանության և անվտանգության ոլորտում ինստիտուտների և կարողությունների զարգացմանը: Գործընթացը հնարավորություն տվեց նշված երկրներին նախանշել միջնաժամկետ հեռանկարում զինված ուժերի զարգացման հիմնական ուղղությունները և դրանց հատկացվող կարողությունները, ինչը բացառությամբ Մերձբալթյան երկրների հետխորհրդային պետությունների պրակտիկայում կիրառվում էր առաջին անգամ:

Երրորդ՝ **«Պաշտպանության բնագավառի բարեփոխումների էության վրա ազդող հիմնական գործոնները»** վերնագրով ենթագլխում, ներկայացվում են բնագավառի բարեփոխումների արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները, տարատեսակ մոդելների և մոտեցումների կիրառման համատեքստում:

Զինվորական հաստատությունները շատ բարդ են գնում բարեփոխումների: Դա պայմանավորված է մի շարք պատճառներով: Հիմնական պատճառներից են բյուրոկրատական, ինչպես նաև հրամանատրման աստիճանակարգային համակարգերը, ինչը դանդաղեցնում է ցանկացած նորարար գաղափարի արագ կյանքի կոչումը: Հաջորդ խնդիրը կապված է մարդկային և նյութական ռեսուրսների հետ: Չնայած ինստիտուցիոնալ բարեփոխումները կարող են զգալի ռեսուրսներ չպահանջել, սակայն մարդկային ռեսուրսների կարիքը զգալիորեն մեծ է: Ամենակարևոր և զգայուն

[3] Donnelly, C., “Security and defence issues of the former Soviet Union and central and eastern Europe”, *Diplomacy & Statecraft*, 5:3, Routledge, 1994, p. 486.

պատճառներից է հատկապես ինստիտուցիոնալ համառությունը, երբ բարձրաստիճան զինվորականները ցանկացած վերափոխում դիտարկում են համակարգին սպառնալիքի տեսանկյունից և բացառում դրա կիրառումը՝ ունենալով հստակ ձգտում պահպանել համակարգի կանխատեսելիությունը՝ կարճաժամկետ պլանավորման կտրվածքով: Երբեմն դա կարող է արդարացվել բարդ աշխարհաքաղաքական իրավիճակով կամ ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիքներով: Այդուհանդերձ, պատմությունը ցույց է տվել, որ արդյունավետ ու երկարաժամկետ բարեփոխումներ հնարավոր է իրականացնել անգամ պատերազմական ժամանակ: Պետք է նշել, որ Խորհրդային Միության փլուզումից հետո ձևավորված կառավարման համակարգն իր ազդեցությունն ունեցավ նաև պաշտպանության բնագավառում իրականացվող վերափոխումների և բարեփոխումների վրա: Պաշտպանության ոլորտի բարեփոխումները հիմնականում դանդաղ էին ընթանում՝ հաշվի առնելով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո նորանկախ պետությունները չունեին մարտունակ բանակ ունենալու համար անհրաժեշտ ռեսուրսներ և ինստիտուցիոնալ հիմքեր: Ընտրված կառավարման համակարգերն ինչ-որ առումով խոչընդոտում էին արմատական բարեփոխումներին, թեև կարելի է եզրակացնել, որ չկա ուղղակի կապ պաշտպանության ոլորտի բարեփոխման և պետական կառավարման ձևի միջև: Պաշտպանության բնագավառի փոփոխություններում Հայաստանը հետխորհրդային այլ պետություններից տարբերվում է նրանով, որ վերջինս պատմականորեն վերապրել է ազգային անվտանգության տեսանկյունից տարբերվող ճանապարհ, ունեցել մշտական սպառնալիքներ, որոնք այլ գործոնների հետ համակցված կանխորոշել են ՀՀ զինված ուժերի վերափոխումների առանձնահատուկ ուղին:

Երկրորդ գլխում՝ **«Ոլորտային բարեփոխումները ՀՀ պաշտպանության և անվտանգության բնագավառում»** վերտառությամբ, վերլուծվում է ՀՀ պաշտպանության և անվտանգության բնագավառներում իրականացված բարեփոխումների նպատակը, էությունը, հիմնական նվաճումները և բացթողումները: Առաջին՝ **«Պաշտպանության բնագավառի ոլորտային բարեփոխումները համապետական պաշտպանունակության ապահովման գործում»** ենթագլխում, քննարկվում են ՀՀ զինված ուժերի ինստիտուցիոնալ կայացման գործընթացը, զարգացման հիմնական փուլերը և ոլորտային բարեփոխումները:

Զինված ուժերի կառուցման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր պետություն, սեփական զինուժի ստեղծմանը ձեռնամուխ լինելով, նախապես ընտրում է դրանց այն կառուցվածքը, որով կերաշխավորվի տվյալ պետության անվտանգությունը: Նշված գործընթացը փոխկապված ու փոխպայմանավորված տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարախոսական, ռազմատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համակարգ է, որը նպատակաուղղված է ազգային շահերի պաշտպանությանը երաշխավորված ԶՈՒ-ի ստեղծմանը, պատրաստմանն ու շարունակական զարգացմանը: Այն իրագործվում է պետության ամբողջ ռազմական կազմակերպվածքի փուլային համալիր կերպափոխմանը համահունչ՝ պետության ռազմական գործունեության ընդհանուր համակարգի շրջանակներում:

ՀՀ Զինված ուժերը կայացման գործընթացն ըստ էության մեկնարկեց զրոյից, և 1992–2008թթ. կարելի է պայմանականորեն համարել բանակի կայացման ու որակական առաջընթացի ժամանակաշրջան: Նշված փուլերում Հայաստանը մեծամասամբ

առաջնորդվեց պաշտպանության բնագավառում Խորհրդային, հետագայում ՌԴ զինված ուժերում կիրառվող լուծումներով: Գործընթացի սկզբում, բնագավառի հաստատութենականացման հիմքում դրվեց նախկին ԽՍՀՄ-ի ռազմական միտքը: Նշված ընտրությունը պատահական չէր և պայմանավորված էր ՀՀ ԶՈՒ ինչպես բարձրագույն, այնպես էլ միջին հրամանատարական օղակների ղեկավար պաշտոններ զբաղեցնող սպայակազմի՝ ԽՍՀՄ ռազմական ուսումնական հաստատություններում և զինված ուժերում կրթության և աշխատանքային փորձի հետ: Հաշվի առնելով նշված ժամանակաշրջանում ստեղծված իրավիճակը և զինված ուժերի ստեղծման մեկնարկային հնարավորությունները՝ տվյալ մոդելի ընտրությունը կարելի է համարել ամենաօպտիմալը, որն ապահովեց ՀՀ ԶՈՒ հետագա զարգացման հիմքերը:

Հայաստանի Հանրապետությունում պաշտպանական բարեփոխումների իրականացման ծրագրային գործընթացը բաժանվում է երեք փուլերի՝

- 1-ին փուլում՝ 2007 – 2008 թթ,. մշակվեցին հայեցակարգային մոտեցումներ և համապատասխան փաստաթղթեր, որոնք հստակեցրին ՀՀ ռազմական անվտանգության ապահովման հիմնադրույթները: Արդյունքում մշակվեցին և հանրությանը ներկայացվեցին ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը[4] և ՀՀ ռազմական դոկտրինը[5]:
- 2-րդ փուլում՝ 2009-2010թթ., ԶՈՒ առկա հնարավորությունների և արդիականացման անհրաժեշտությունների, պահանջվող բարեփոխումների ծավալների որոշման և պլանավորման նպատակով իրականացվեց պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՌՎ) գործընթացը: 2011 թվականին հրապարակվեց ՊՌՎ-ի հանրային իրազեկման փաստաթուղթը, որտեղ արտացոլվեցին նախորդ տարիներին այդ գործընթացի շրջանակներում իրականացված աշխատանքի հիմնադրույթները[6]:
- 3-րդ փուլում՝ 2010-2015թթ,. ՊՌՎ եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա Զինված ուժերի համար մատչելի ազգային ու միջազգային հնարավորությունների կիրառմամբ իրականացվեցին գործնական բարեփոխումներ:

Երկրորդ՝ **«ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների նպատակաուղղվածության, արդյունավետության և շարունակականության ապահովման հիմնական հայեցակետերը»**, վերնագրով ենթագլխում վերլուծվում են պաշտպանության բնագավառի բարեփոխումների շրջանակներում հայեցակարգային մոտեցումների կիրառումը, պաշտպանական ծախսերի, ռեսուրսների կառավարման արդյունավետությունը, պաշտպանական քաղաքականության և պլանավորման մշակույթի ներդրման գործընթացները:

---

[4] Հայաստանի Հանրապետության նախագահի ՆՀ-37-Ն հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», 07.02.2007, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189 (դիտում 15.01.2019)

[5] Հայաստանի Հանրապետության նախագահի ՆՀ-308-Ն հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին», 25.12.2007, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116 (դիտում 19.01.2019)

[6] Պաշտպանության ռազմավարական վերանայում. հանրային օգտագործման համար, https://mil.am/files/LIBRARY/HHPRV/832.pdf (դիտում 06.02.2019)

Պետության ռազմական հզորությունը որոշվում է հիմնականում նրա ընդհանուր ռեսուրսային հզորությամբ՝ ինչպիսիք են բնական ռեսուրսները, արդյունաբերությունը, բնակչության թիվը և զարգացման ընդհանուր մակարդակը: Ազգային անվտանգության ապահովման արդյունավետությունը կախված է առկա ազգային ռեսուրսների ծավալից, ազգային անվտանգությանը հատկացվող դրանց մասնաբաժնից, համապատասխան բաշխման և օգտագործման արդյունավետությունից: Պաշտպանական ծախսերը կարող են իրացվել արդյունավետ, բայց դրանց մի զգալի մասը կարող է նաև վատնվել, ինչը կհանգեցնի ապրանքների և ծառայությունների վերջնական արժեքի բարձրացմանը կամ, ընդհակառակը, կազդի արդյունքների որակի (եթե ոչ քանակի) վրա[7]: Հայաստանի պաշտպանական ծախսերի կտրուկ աճ տեղի ունեցավ 2018-2019 թվականներին, երբ ՀՀ կառավարությունը ռազմական ծախսերը ՀՆԱ-ի 3,8%-ից հասցրեց 4,9%-ի: Ի տարբերություն Հայաստանի, Իսրայելն այնպիսի անվտանգության երաշխիքներով, ինչպիսիք են սեփական միջուկային զենքը և ԱՄՆ-ի զգալի ֆինանսական և ռազմական աջակցությունը, նույն ժամանակահատվածում ծախսել է ՀՆԱ-ի 5.3% ից (2018-2019) մինչև 6.5%: (2002):

Երրորդ գլխում՝ **«Պետության շուրջ ձեվավորված անվտանգային միջավայրի և դրա փոփոխման դինամիկայի պայմաններում ՀՀ պաշտպանության բնագավառի բարեփոխումների իրականացման հիմնական ուղղությունները»** վերտառությամբ, քննարկվում են միջազգային և տարածաշրջանային զարգացումների համատեքստում պաշտպանության բնագավառի զարգացման հիմնական ուղղությունները: Առաջին՝ **«ՀՀ շուրջ ձևավորված անվտանգային միջավայրի և արտաքին անվտանգային հիմնական սպառնալիքների գնահատումը»** վերնագրով ենթագլխում վերլուծվում և գնահատվում է անվտանգային միջավայրը, քաղված դասերի համատեքստում առաջարկվում ՀՀ ԶՈՒ արդիականացման հիմնական ուղղությունները և մոտեցումները:

Վերջին տարիներին միջազգային անվտանգության ճարտարապետությունը շարունակաբար ենթարկվում է լուրջ փոփոխությունների՝ բախվելով տարատեսակ բնույթի նորանոր մարտահրավերների: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ մարտահրավերներն ունեն ինչպես քաղաքական ու տնտեսական, այնպես էլ ռազմական բնագավառներում մրցակցությունն ու հակասությունները խորացնելու միտում: Այս ֆոնի ներքո շարունակում են ուժգնանալ գլոբալ դերակատարների միջև հակասությունները: Հենց նմանատիպ բարդ միջազգային և տարածաշրջանային իրավիճակն էլ ստիպում է ՀՀ-ին իրականացնել վերափոխում առաջնային կերպով՝ պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

ՀՀ զինված ուժերի առաջարկվող վերափոխումը ներառում է արդիականացման հիմնական տեսակներից չորսը՝

1. գործընթացների նորարացումը վերաբերում է կազմակերպությունների կողմից իրենց գործառույթների իրականացմանը, և այդ նորարարացումը հաճախ սերտ կապ ունի տեխնոլոգիական նորարարության հետ: Ռազմական համատեքստում այն վերափոխում է նոր գաղափարները նոր դոկտրինի կամ մարտավարության, տեխնիկայի, ընթացակարգերի կամ վերապատրաստման նոր մեթոդաբանության,

[7] Hitch, Charles Johnston, and Mckean N. Roland. *The economics of defence in the nuclear age*. Cambridge, Massachusetts, Colonial Press Inc., 1960, p. 5.

2. կազմակերպական նորարարացումը ներառում է նոր կառուցվածքների, ինչպիսիք են նոր հրամանատարությունների, շտաբների կամ նոր ստորաբաժանումների ստեղծումը և զարգացումը,

3. կադրային նորարարացումը ստեղծում է նոր միջոցներ մարդկային կապիտալը զարգացնելու, գործի դնելու և պահպանելու, ինչպես նաև կազմակերպական մշակույթ ձևավորելու համար,

4. հայեցակարգի նորարարացումը զարգացնում և ամրագրում է նոր հայեցակարգ կամ առաջարկվող մոտեցում՝ տեխնոլոգիաները, գործընթացը, կազմակերպումը և կադրերը համադրելու նպատակով[8]:

Հիմնական հետևություններ

- զարգացնել պատերազմից արագ վերականգնվելու կարողություններ,
- ապահովել ՀՈ ոլորտային բարեփոխումների իրականացման լիարժեքությունը,
- նշված գործընթացների իրականսցմսն համար հատկացնել մեծ ռեսուրսներ:

Երկրորդ՝ **«Պաշտպանության բնագավառում շարունակական բարեփոխումների նշանակությունը համակարգի արդիականացման գործում»** վերնագրով ենթագլխում ներկայացվում է պաշտպանության բնագավառում ոլորտային բարեփոխումների շարունակականության ապահովման անհրաժեշտությունը և ոլորային զարգացման հիմնական միտումները:

Միջազգային և տարածաշրջանային անվտանգային ճարտարապետությունը գտնվում է կերպափոխումների և ցնցումների փուլում, ինչն անմիջականորեն ապակայունացնող ազդեցություն է գործում, մասնավորապես, Հարավային Կովկասի առանց այն էլ բարդ և հակասական անվտանգային միջավայրի վրա: Ուստի հրամայական է միջնաժամկետ հեռանկարում կանխատեսվող զարգացումների, ռազմարվեստում ու ռազմական գիտության մեջ կատարվող ինտենսիվ փոփոխությունների հաշվառմամբ կառուցել մերօրյա մարտահրավերներին դիմադրունակ, համապատասխան կարողություններ, հմտություններ ունեցող և արագ արձագանքման ունակ ազգային պաշտպանական համակարգ:

Պաշտպանական բարեփոխումները կարող են դիտարկվել երկու տեսանկյունից՝ որպես սպառնալիքակենտրոն, կամ սպառնալիքա կողմնորոշված (threat-oriented), և որպես ունակակենտրոն, կամ ունակակողմնորոշված (capabilities-oriented): Առաջին դեպքում դրանք դիտվում են որպես համակարգի առջև որևէ ժամանակահատվածում ծառացած մարտահրավերներին և կոնկրետ սպառնալիքներին դիմակայությունն ու վերացմանը, երկրորդ դեպքում՝ որպես չորոշարկված (unidentified) սպառնալիքներին արագ արձագանքման համար անհրաժեշտ կարողությունների զարգացմանը նպատակաուղղված[9]: Այսպես. բարեփոխումների նախաձեռնման փուլում սահմանվում է այն նպատակը, որին պետք է նպատակաուղղվի բարեփոխումների առանցքը: Պաշտպանության ոլորտի բարեփոխումների առանցքն, իր հերթին, հիմնվում է առկա անվտանգային միջավայրի գնահատման, անվտանգային միջավայրում տեղի ունեցող

---

[8] John J. Garstka, "Patterns in Innovation," in *Transforming Defence Capabilities*, edited by Scott Jasper (Boulder: Lynne Rienner Publishers 2009), pp. 57-58.

[9] Տես *K. Marklund, K. Neretnieks*. Military Reform: Practice and Lessons. Institute for Security and Development Policy, 2008 (https://isdp.eu/content/uploads/publications/2009_marklund-neretnieks_military-reform.pdf):

զարգացումներին արձագանքման պլանավորման, պետության դեմ ուղղված ռեալ և հավանական սպառնալիքների հաշվառման բաղադրիչների վրա[10]:

Ժամանակակից աշխարհում ռազմական սպառնալիքները փոխկապված են, պատերազմի վարման եղանակները շարունակ փոփոխվում ու կատարելագործվում են: Կարևոր է այն գիտակցումը, որ պատերազմը ստատիկ երևույթ չէ, այն ենթադրում է կողմերի միջև սովորելու, հարմարվելու, անդադար փոփոխությունների գնալու դինամիկ մրցակցություն, ինչը ձևավորում է պաշտպանության բնագավառի շարունակական բարեփոխումների պահանջ:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության առարկայի ուսումնասիրության արդյունքում կատարված հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Պաշտպանության բնագավառի բարեփոխումների գործընթացում առանցքային բաղադրիչներից է հայեցակարգային հիմքով բարեփոխումների երկարաժամկետ տեսլականը ու դրանից բխող իրատեսական գործողությունների ծրագիրը, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ բնագավառի զարգացման համար: Այդուհանդերձ, դոկտրինը մեկուսացված կերպով չի կարող հանդիսանալ փոփոխությունների միակ խթանը: Վերջինս կարող է հանգեցնել էական փոփոխությունների, եթե համակցվում է նորարարություն խթանող ռազմավարական մշակույթի հետ: Արցախյան երկրորդ պատերազմի և Ադրբեջանի կողմից ՀՀ ինքնիշխան տարածքների նկատմամբ իրականացրած հարձակումների հետևանքով ստեղծված իրավիճակը, ինչպես նաև ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական զարգացումները, բացարձակ հրամայական են դարձրել ՀՀ նոր Ազգային անվտանգության ռազմավարության ստեղծումը, որի հիման վրա կընդունվի ՀՀ նոր ռազմական դոկտրինը: Նշված փաստաթղթերի ընդունումը հիմք է ծառայելու ՀՀ նոր ՊՌՎ գործընթացի մեկնարկին: Հաշվի առնելով ՊՌՎ գործընթացի իրականացման հրատապությունը, վերջինիս նոր շրջափուլը պետք է մեկնարկի հնարավորինս արագ, որը Հայաստանի զարգացման առաջնահերթությունների և պաշտպանական բարեփոխումների համատեքստում սահմանելու է ռազմական միջոցներով երկրի պաշտպանության իրականացման համար ԶՈՒ առկա կարողություններն ու պահանջվող անհրաժեշտությունները: ՊՌՎ նոր շրջափուլի անցկացումը կարևոր է նաև ՀՀ ԶՈՒ-երից պահանջվող պատրաստականության վիճակի գնահատման տեսանկյունից: Վերջինիս արդյունքները կարևոր հիմք են հանդիսանալու նաև պետության ռազմական կարիքները որոշելու և ԶՈՒ օպտիմալ կառուցվածքը միջնաժամկետ հեռանկարում պլանավորելու համար: ՊՌՎ գործընթացի անցկացումը հնարավորություն է ընձեռելու նաև տեսանելի հեռանկարում գնահատելու ռազմաքաղաքական միջավայրը՝ իրականացվող բարեփոխումների շրջանակներում թույլատրելի ռիսկերի որոշման համար:

2. Հետևելով պաշտպանության ոլորտի զարգացման գլոբալ միտումներին, պետք է արձանագրել, որ համաշխարհային պրակտիկայում տարբեր երկրների պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների կողմից ԶՈՒ զարգացման տեսլականների հրապարակումը լավ հնարավորություն է ոլորտի բարեփոխումների գործընթացի համար

[10] Տես *Agnes Gereben Schaefer, Lynn E. Davis, Ely Ratner, Molly Dunigan, Jeremiah Goulka, Heather Peterson, K. Jack Riley*. Develping a Defence Sector Assessment Rating Tool. National Defence Research Institute, 2010 (https://www.rand.org/pubs/technical_reports/TR864.html):

ուղեցույց փաստաթուղթ դառնալու, ինչպես նաև հասարակությանը համառոտ ներկայացնելու ոլորտում իրականացվելիք աշխատանքները:

3. Բարեփոխումների շրջանակներում պետք է գրեթե ամբողջապես վերանայվի նաև ԶՈՒ կանոնագրքերի և կանոնադրությունների տիրույթը՝ առաջնային կերպով վերանայելով ՀՀ ԶՈՒ մարտական կանոնադրությունը, ինչպես նաև ներքին ծառայության կանոնագիրքը: Ժամանակակից բարդ ռազմական միջավայրը ստիպում է կտրուկ փոփոխություններ իրականացնել պատերազմավարման գործընթացում՝ անցում կատարելով ավանդական ռազմական մտածողությունից ժամանակակից պատերազմների կանոններով թելադրվող և մարտահրավերներին ադապտացվող ճկուն կազմակերպության: Դրա դրսևորումներից մեկը կարող է լինել անցումը տարածքի ստատիկ պաշտպանությունից և հավասարապես՝ «կաղապարային» հակահարվածներից պատերազմի նկատմամբ մանևրային մոտեցմանը: Վերջինս համադրելու է անհատական ու կոլեկտիվ պատրաստվածությունը և պատրաստականությունը՝ անհրաժեշտ կրակի և մանևրային բարդ խնդիրների իրագործման համար: Նշված մոտեցումը մանրամասն ներկայացված է արևմտյան դոկտրիններում:

4. Բարեփոխումների շրջանակներում կարևոր տեղ է զբաղեցնում նաև անվտանգության միջավայրի օբյեկտիվ և համապարփակ պլանավորումն ու գնահատումը, որի կարևորագույն մաս է նաև մարդկային ու ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխումը և օգտագործումը՝ նվազեցնելով բյուրոկրատական համակարգի ազդեցության բացասական կողմերը: Կառավարումն իրենից ներկայացնում է պաշտպանության ոլորտի ուղղորդում և առաջնորդում: Զինված ուժերի մարտունակության բարձրացումը պետք է դրվի վերջինիս երեք խոշոր հենասյուների՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի, կառավարման համակարգի և անձնակազմի արհեստավարժության շարունակական զարգացման հիմքում:

5. Հաջորդ կարևոր ոլորտը, որն անմիջականորեն կապված է Զինված ուժերի արհեստավարժության հետ, ռազմական կրթությունն է: Զինված ուժերի արհեստավարժ կադրերով համալրումը, կառավարման համակարգի արդյունավետության բարձրացումը պահանջում են ինքնաբավ ռազմակրթական համակարգի ձևավորում: Պետք է փաստել, որ ռազմակրթական բարեփոխումների շրջանակներում Հայաստանը կարողացել է ապահովել վարժարանից մինչև ռազմավարական մակարդակի կրթության ձևավորումը երկրի ներսում, ինչն իրականում լուրջ ձեռքբերում է: Ներկայումս հիմնական ջանքերը պետք է կենտրոնանան նշված մակարդակների համար ուսումնական ծրագրերի, դասավանդվող առարկաների շարունակական թարմացման և համաշխարհային ռազմակրթական ոլորտի հիմնական մոտեցումներին և միտումներին համահունչ լինելուն:

6. Հարավային Կովկասում և մերձատարածքում տիրող ռազմաքաղաքական իրավիճակը, Ադրբեջանի կողմից իրականացվող այսպես կոչված «տարածքի պոկում» ռազմավարությունը, հնչեցվող ռազմատենչ հայտարարությունները, սպառազինության և ռազմական տեխնիկայի նոր խմբաքանակների ձեռքբերումները, ստիպում են հայկական կողմին շարունակաբար իրականացնել ԶՈՒ մարտունակության բարձրացման համալիր միջոցառումներ կառավարման մարմինների և զորամիավորումների պատրաստվածության բարձր մակարդակն ապահովելու նպատակով: ՀՀ պաշտպանական բարեփոխումների գերխնդիրը ԶՈՒ այնպիսի չափանիշների ստեղծումն

ու ներդրումն է, որոնք Հայաստանին կդարձնեն չափազանց վտանգավոր հակառակորդ, որի հետ ռազմական առճակատման գնալուց առաջ պետք է լրջորեն խորհել սպասվելիք ծանրագույն հետևանքների մասին:

7. Պաշտպանության բնագավառում բարեփոխումների արդյունավետությունը և շարունակականությունն ապահովելու գործում կարևորագույն դերակատարություն ունեն ռազմաքաղաքացիական հարաբերությունները: Ռազմաքաղաքացիական հարաբերությունների կարևոր մաս է կազմում նաև միջգերատեսչական փոխգործակցությունը, որը հնարավոր է միայն պաշտպանության և ընդհանրապես երկրի պետական կառավարման ոլորտում ռազմաքաղաքացիական առողջ հարաբերությունների շրջանակներում: Նշված հարաբերությունների երկու կարևոր ուղղություններից է նաև զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողությունը, պաշտպանության բնագավառում հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, այդ թվում՝ ներքին վերահսկողական մեխանիզմների ամրապնդմամբ:

8. Տեխնոլոգիաների սրընթաց զարգացման պայմաններում արդիական ԶՈՒ ունենալու կարևոր հիմնական նախապայմաններից մեկն է նաև ԶՈՒ տեխնոլոգիական հագեցվածությունը: Սկսած առնվազն 20-րդ դարի վերջին տասնամյակից ռազմական գործողությունների ընթացքն ու ավարտը որոշվում է ոչ այնքան զինվորների բարոյահոգեբանական հատկանիշներով, թեև դրանք շարունակում են պահպանել իրենց նշանակությունը, որքան զորքերի տեխնիկական հագեցվածությամբ: Այս առումով անհրաժեշտ է հնարավորինս ճիշտ հաշվարկել այս ոլորտում ՀՀ ունեցած ներուժը և հստակ սահմանել այն տեխնոլոգիաներն ու զինատեսակները, որոնք կարող են արտադրվել Հայաստանում և որոնք անհրաժեշտ է ներմուծել:

9. ՀՀ ԶՈՒ արդյունավետության բարձրացման համար հիմնովին պետք է բարեփոխվի որոշումների կայացման համակարգը: Այս առումով հետաքրքրական է Ջ. Բոյդի OODA (observe, orient, decide, act - դիտարկել, կողմնորոշվել, որոշել, գործել) հանգույցի տեսությունը, որն ըստ էության ռազմական գործողություններում որոշումների կայացման հայեցակարգ է: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման արագ տեմպը և որոշումների կայացման գործընթացի ավտոմատացումը, տեխնոլոգիաները իրենց վրա վերցնում են դիտարկման, կողմնորոշման, որոշումների կայացման և նույնիսկ գործելու գործառույթները՝ նվազեցնելով մարդու միջամտության անհրաժեշտությունը: Նշված հայեցակարգը այնուամենայնիվ պետք է համակցվի և հաշվի առնվի մարտադաշտում ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրման և հակառակորդի կողմից նշված ուղղությամբ գործողությունների համատեքստում:

Ատենախոսության հիմնական դրույթները և նորույթ պարունակող եզրակացություններն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում՝

1. Միջազգային ռազմական համագործակցության դերն ու նշանակությունը Հայաստանի Հանրապետության ռազմակրթական ոլորտի բարեփոխումներում, «Հանրային կառավարում« գիտական հանդես, ՀՀ պետական կառավարման ակադեմիա, 2017 թվական, թիվ 5, էջ 208-217
2. Պետական կառավարման մոդելի կերպափոխման համառոտ նկարագիրը հետխորհրդային տարածքում, «Արդարադատություն» գիտական հանդես, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտ 2018 թվական, թիվ 3/44, էջ 55-59
3. Միջազգային ռազմական համագործակցության դերը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի արդիականացման գործընթացում, «Հայկական բանակ» ռազմամասնագիտական հանդես, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2018 թվական, թիվ 1-2 /95-96/, էջ 127-135
4. Պաշտպանական քաղաքականության ներառումը ՀՀ անվտանգային համակարգում, Գիտական Արցախ պարբերական, 2022 թվական, թիվ 3 /14/, էջ 78-87
5. Միջազգային ռազմական համագործակցությունը և ռազմական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական ուղղությունները, «Հայկական բանակ» ռազմամասնագիտական հանդես, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2022 թվական, թիվ 4 /114/, էջ 58-66
6. Պաշտպանության համակարգի կատարելագործմանն ուղղված բարեփոխումների շարունակականության կարևորությունը, «Հայկական բանակ» ռազմամասնագիտական հանդես, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ, 2023 թվական, թիվ 2, էջ 70-82:

TIGRAN SAMVEL HARUTYUNYAN

THE PROBLEM OF MODERNIZATION OF THE DEFENCE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF NATIONAL SECURITY

Dissertation under IG.00.02 – "Political Institutes and Processes" aspiring to earn PHD in Political Sciences

The defense of the dessertation will take place at 14:00 p.m, December 19th 2023 at the session of specialized Council 056 specializing in "Political Sciences and International Relations" of the Higher Attestation Committee of the Republic of Armenia at the Yerevan State University.

(Address: Alek Manukyan 1, Yerevan 0025, Republic of Armenia)

Summary

The main objective of the thesis is to examine the character of the defence reforms in Armenia, on scientific and analytical framework to assess the effectiveness of these reforms and their impact on the possibility of improving the scope, as well as to modernize the further implementation of defence reforms in the foreseeable future.

This study aims to identify the problems of defence reform and the analysis of reforms in the current regional developments. The subject of research is the study of defence reforms as an important component of the military-political activity of the Republic of Armenia.

The work consists of introduction, three chapters, conclusion and the list of references. The introduction substantiates the relevance of the topic under study, presents the degree of scientific elaboration of the issue, the purpose and objectives of the research, scientific novelty, the stated provisions of protection, as well as the theoretical and applied significance of the work.

The first chapter, entitled "Defence Sector Reforms in the Context of Public Administration Reforms in Post-Soviet States" consists of three subsections. The first subsection, "Transformation of public administration in the post-Soviet period" briefly presents the features of the process of transformation of public administration in the post-Soviet period, analyzes the views and approaches expressed in the professional literature regarding the newly formed institutions of public administration.

The second subsection entitled "The Role and Importance of the Defence Sector in Public Administration of Post-Soviet States" discusses reforms being implemented in the defence sector of post-Soviet states, in particular in Georgia and Ukraine, as well as further processes, developments and main results and comparisons with a similar process implemented in Armenia.

The third subsection entitled "Main factors influencing the character of defence sector reforms" presents the main factors influencing the effectiveness of defence sector reform, in the context of the use of various models and approaches.

The second chapter, entitled "Sectoral reforms in the field of defence and security of the Republic of Armenia," outlines and analyzes the purpose, essence, main achievements and gaps of the reforms being implemented in the field of defence and security of the Republic of Armenia. The first subsection entitled "Sectoral reforms in the field of defence in ensuring

national defence capability" discusses the process of institutionalization of the Armed Forces of the Republic of Armenia, the main stages of development and sectoral reforms.

The second subsection entitled "Main points of view on ensuring the focus, efficiency and continuity of defence reforms in the Republic of Armenia" analyzes the application of conceptual approaches within the framework of defence reforms, the effectiveness of defence spending, resource management, the processes of implementing defence policy and planning culture.

The third chapter "Main directions for the implementation of reforms in the defence sector in the context of the security environment that has developed around the state and the dynamics of its changes" examines the main directions of development of the defence sector, discussed in the context of international and regional developments. The first subsection entitled "Assessment of the security environment formed around the RA and the main external security threats" analyzes and evaluates the security environment in the context of lessons learned, offering recommendations for the main directions and approaches for the modernization of the RA Armed Forces.

The second subsection entitled "Importance of Continuous Reforms in the Defence System Modernization" presents the need to ensure continuity of sectoral defence reforms and the main trends of defence area development.

Conclusion summarizes the main take-aways from the dissertation.

АРУТЮНЯН ТИГРАН САМВЕЛОВИЧ

ПРОБЛЕМА МОДЕРНИЗАЦИИ ОБОРОННЫХ РЕФОРМ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Диссертация на соискание научной степени кандидада политологических наук, по специальности ИГ.00.02 - "Политические институты и процессы".

Защита диссертации состоится в 14:00 19 декабря 2023 г. в Специализированном совете 056 "Политология и международные отношения" ВАК РА действующем в Ереванском государственном университете (адрес: РА, г. Ереван 0025 ул. А.Манукяна 1)

Резюме

Основная цель работы заключается в рассмотрении характера оборонных реформ в Армении, научно-аналитической базе, оценке эффективности данных реформ и их влияния на возможность улучшения масштабов, а также модернизации оборонных реформ в обозримом будущем.

Целью исследования является выявление проблем оборонной реформы и анализ реформ в условиях современных региональных событий. Предметом исследования является изучение оборонной реформы как важной составляющей военно-политической деятельности Республики Армения. Работа состоит из введения, трех глав, выводов и списка цитируемой литературы. Во введении обоснована актуальность исследуемой темы, представлена степень научной разработанности вопроса, цель и задачи исследования, научная новизна, изложенные положения охраны, а также сформулированы теоретическая и прикладная значимость работы.

Первая глава под названием «Реформы оборонного сектора в контексте реформ государственного управления постсоветских государств» состоит из трех подразделов. В первом подразделе «Трансформация государственного управления в постсоветский период» кратко представлены особенности процесса трансформации государственного управления в постсоветский период, анализируются взгляды и подходы, высказанные в профессиональной литературе относительно вновь образованных институт государственного управления.

Во втором подразделе «Роль и значение оборонного сектора в государственном управлении постсоветских государств» обсуждаются реформы, реализуемые в оборонном секторе постсоветских государств, в частности в Грузии и Украине, а также дальнейшие процессы, разработки и основные результаты и сравнения с аналогичным процессом, реализованным в Армении.

В третьем подразделе «Основные факторы, влияющие на характер реформ оборонного сектора» представлены основные факторы, влияющие на эффективность реформирования отрасли, в контексте применения различных моделей и подходов.

Во второй главе под заголовком «Отраслевые реформы в сфере обороны и безопасности Республики Армения» излагаются цель, сущность, анализируются основные достижения и пробелы реформ, реализуемых в сфере обороны и безопасности Республики Армения. В первом подразделе «Отраслевые реформы в сфере обороны в обеспечении национальной обороноспособности» обсуждаются процесс институционализации Вооруженных Сил РА, основные этапы развития и отраслевые реформы.

Во втором подразделе «Основные точки зрения на обеспечение целенаправленности, эффективности и непрерывности оборонных реформ РА», анализируется применение концептуальных подходов в рамках оборонных реформ, эффективность оборонных расходов, управление ресурсами, процессы внедрения оборонной политики и культуры планирования.

В третьей главе «Основные направления реализации реформ в сфере обороны в условиях сложившейся вокруг государства среды безопасности и динамики ее изменения» рассмотренные основные направления развития сферы обороны, обсуждаются в контексте международных и региональных событий. В первом подразделе, озаглавленном «Оценка среды безопасности, сформированной вокруг РА, и основные внешние угрозы безопасности», анализируется и оценивается среда безопасности в контексте извлеченных уроков, предлагаются основные направления и подходы модернизации Вооруженных Сил РА.

Во втором подразделе, озаглавленном «Важность непрерывных реформ в сфере обороны в модернизации системы», представлены необходимость обеспечения преемственности отраслевых реформ и основные тенденции развития в сфере обороны.

В заключении обобщены основные выводы, полученные в результате изучения предмета диссертации.